ԿԸՀ 2019 թ. Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2019 թ. արժեքը հավասար է **42**-ի (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 7 միավոր), իսկ ստանդարտ սխալի չափը՝ 4.31-ի: Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2012-ից մինչև 2019 թ. ընկած ժամանակահատվածում:

Գծապատկեր 1.



180 երկիր ներառող ԿԸՀ դասակարգման 2019 թ. աղյուսակում Հայաստանը ***Բահրեյնի*** և ***Սողոմոնյան կղզիների*** հետ կիսում է **77-ից 79-րդ տեղերը**: 2018 թ. ԿԸՀ համաթվի 35 միավորով Հայաստանը կրկին 180 երկրների շարքում կիսում էր **105-ից 113-րդ** տեղերը: Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ Հայաստանը շարունակում է ներառված մնալ ***Արևելյան Եվրոպա –Կենտրոնական Ասիա*** տարածաշրջանի մեջ: Աղյուսակ 1-ում բերված է Արևելյան Եվրոպա –Կենտրոնական Ասիա տարածաշրջանի 2019 թ. ԿԸՀ դասակարգման աղյուսակը: Այդ տարածաշրջանի մեջ ներառված են՝ բալկանյան երկրներից ***Չեռնոգորիան***, ***Սերբիան***, ***Բոսնիա և Հերցեգովինան***, ***Ալբանիան***, **Հյուսիսային *Մակեդոնիան*** և ***Կոսովոն***, նախկին խորհրդային հանրապետությունները՝ բացի ԵՄ անդամ բալթյան հանրապետություններից, ինչպես նաև ***Թուրքիան***:

Աղյուսակ 1.

Երկրի դիրք	Երկիր	2019 թ. ԿՀՀ արժեքը	Աղբյուրների թիվը	AFDB	BF (SGI)	BF (TI)	EIU	FH	GI	IMD	PERC	PRS	VDEM	WB	WEF	WJP
44	Վրաստան	**56**	5			53		50	47				68			61
66	Բելառուս	**45**	7			37	55	33	47			32	49			60
66	Չեռնոգորիա	**45**	5			53		47	47				26		51	
77	Հայաստան	**42**	6			45		39	47			32	32		60	
91	Սերբիա	**39**	8			45	37	53	35			32	35		40	35
91	Թուրքիա	**39**	9		26	37	37		47	45		41	25		57	38
101	Բոսնիա և Հերցեգովինա	**36**	7			37	37	44	35				32		29	40
101	Կոսովո	**36**	5			37		36	35				39	35		
106	Ալբանիա	**35**	8			37	37	42	35			41	20		37	28
106	Հյուսիսային Մակեդոնիա	**35**	7			41	20	47	35				28		32	42
113	Ղազախստան	**34**	9			33	20	24	35	55		43	17		47	36
120	Մոլդովա	**32**	9			29	37	33	47			32	21	27	30	30
126	Ադրբեջան	**30**	7			29	20	21	35			24	10		69	
126	Ղրղզստան	**30**	7			37		30	35				17	35	26	28
126	Ուկրաինա	**30**	9			41	20	36	22	31		36	23		30	34
137	Ռուսաստան	**28**	9			29	20	24	22	37		24	21		38	36
153	Տաջիկստան	**25**	6			17		21	22				13	18	57	
153	Ուզբեկստան	**25**	7			29	20	21	22				22	27		35
165	Թուրքմենստան	**19**	5			17	20	21	22				15			

Ինչպես երևում է աղյուսակից, տարածաշրջանի19 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 4-րդ տեղը (2018 թ. նա գրավում էր 10-րդ տեղը): Այս տարածաշրջանում Հայաստանը, ինչպես և 2018-ին, նախկին խորհրդային հանրապետություններից զիջում է ***Վրաստանին*** և ***Բելառուսին***, որոնց ԿՀՀ 2019 թ. համաթվերի արժեքներն են, համապատասխանաբար, **56** (զբաղեցնում է **44**-ից **47**-րդ տեղերը՝ ամենաբարձրը տարածաշրջանում) և **45** (**66**-ից **69**-րդ տեղեր՝ երկրորդը տարածաշրջանում):

Ինչ վերաբերում է իր հարևան երկրներին, ապա Հայաստանն այժմ զիջում է միայն ***Վրաստանին***՝ առաջին անգամ առաջ անցնելով ***Թուրքիայից***, որի 2019 թ. ԿԸՀ համաթվի արժեքը հավասար է **39**-ի (**91**-ից **92**-րդ տեղեր): Ինչպես և նախկինում, Հայաստանն առաջ է մյուս երկու հարևաններից՝ ***Ադրբեջանից*** (**30** միավոր՝ **126**-ից**129**-րդ տեղեր) և ***Իրանից*** (**26** միավոր՝ **146**-ից **152**-րդ տեղեր): Գծապատկեր 2-ում ներկայացված են Հայաստանի և իր հարևան երկրների ԿԸՀ 2012-2019 թթ. արժեքները:

Գծապատկեր 2.



Բելառուսից բացի, ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ԿԸՀ արժեքները շարունակում են ցածր մնալ Հայաստանի ԿԸՀ արժեքից: Մասնավորապես, ***Ռուսաստանի*** 2019 թ. ԿԸՀ արժեքը, ինչպես և 2018-ին, **28** միավոր է (**137**-ից **145**-րդ տեղեր), ***Ղրղզստանինը***՝ **30** (**126**-ից **129**-րդ տեղեր), իսկ***Ղազախստանինը***՝ **34** միավոր (**113**-ից **118**-րդ տեղեր): Գծապատկեր 3-ում բերված են Հայաստանի և ԵԱՏՄ մյուս երկրների ԿԸՀ 2012-2019 թթ. արժեքները:

Գծապատկեր 3


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵԱՏՄ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐԻ
2012-2019ԹԹ. ԿԸՀ ԱՐԺԵՔՆԵՐԸ
50
40
30
20
0
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
Հայաստան
Ռուսաստան
Բելառուս
Ղազախստան
Ղրղզստան